# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՊԱՏԳԱՄԸ

(31 դեկտեմբերի 2003 թ.)

Սիրելի ժողովուրդ հայոց.

Տարեմուտ է: Դիմավորում ենք նոր՝ 2004 թվականը: Տոնական այս պահին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմորեն ողջունում և Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում ամենքիդ ի Հայաստան, ի Արցախ և ի Սփյուռս:

Տարեմուտը միշտ խորհրդաշատ է, միշտ հուսառատ: Տարեմուտը՝ քրիստոնյաներիս համար նաև հոգեշաղախ է ու հոգենորոգ, քանզի ամեն նոր տարի սկիզբ է առնում Քրիստոսի Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության խորհրդով, որ պարզում է մեր հոգիներին Աստծո Սերը մեր հանդեպ և անընդմիջելի մերձավորությունը մեզ:

Ժամանակի առանձնահատուկ հանգրվան դարձած տարեմուտի այս փոքրիկ պահը մեր հայացքները ուղղում է միաժամանակ դեպի անցնող տարին և դեպի հույսերով եկող նոր տարին:

Գոհաբանական աղոթք բարձրացնենք երկինք, որ Աստված խաղաղ պահեց մեր Հայրենիքի սահմանները, և մեր ժողովուրդը Հայաստանում ու Արցախում ձեռնամուխ եղավ իր ստեղծագործ կյանքի առաջընթացին: Այսօր բոլորս հատկապես ուրախ ենք, որ վերաշինվում են աղետյալ մեր շեները, և բազմաթիվ ընտանիքներ նոր հարկի ներքո են դիմավորում տարեմուտը, որ իրենց դռներն են բացել մեր մշակույթի նորոգված հաստատությունները: Արդարև, հակառակ առկա տնտեսական ու ընկերային բազմաթիվ հիմնախնդիրների ու դժվարությունների, հուսադրող զարգացումները իրական են հայրենական մեր կյանքում ու պիտի բազմապատկվեն Աստծո օգնականությամբ, մեր հոգում և մեր կյանքում առ Հայրենին սիրո հաղթանակներով:

Անցնող տարին հատկանշվեց նաև Հայրենիքի և Սփյուռքի ներշաղախ կյանքի դրսևորումներով, հայրենաշեն իրագործումներով, հանդիպումներով ու հավաքներով, որոնք նոր ծրագրերի ու ձեռնարկների ելակետ ու խրախույս պիտի դառնան՝ զորացնելով լավատեսության ոգին աշխարհասփյուռ մեր ժողովրդի:

2003 թվականը նշանակալից եղավ և ազգային-եկեղեցական մեր կյանքում: Օրհնաբեր և աղոթախոս օրեր ապրեցինք երկու մեծ հոբելյաններով: Տոնախմբեցինք Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի 1700-ամյակը և Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքի 1000-ամյան: Մեր հավատի նորոգության նոր առիթներ դարձան գիտաժողովները, հրատարակությունները, բազմաթիվ միջոցառումներն ու հանդիսությունները, Հայաստանի և Սփյուռքի թեմերից մեր ժողովրդի հազարավոր զավակների ուխտավորաբար այցելությունները Սուրբ Էջմիածին: Այսօր առանձնակի կարևորում ենք «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդությունը հանրակրթական մեր դպրոցներում, իրադարձություն, որով նաև հիշվելու է 2003 թվականը մեր պատմության մեջ: Հիրավի, բացվել են Աստծո ողորմության դռները: Լավատես հոգով շրջենք 2003 թվականի էջը մեր

պատմության: Նոր տարին դիմավորենք բարեշրջությունների, բոլոր ասպարեզներում որոշիչ տեղաշարժերի բարի ակնկալությամբ և այն համոզումով, որ պիտի ընթանանք միասնաբար, համատարած ու աններկբա՝ յուրաքանչյուրս մեր տեղում կրելով պատասխանատվության մեր բաժինը:

Այս պատգամով ու մաղթանքով վերստին Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում համայնատարածական մեր ժողովրդին, ազատաշունչ Արցախի հայությանը, Սփյուռքի մեր զավակներին: Թող Ամենակարողն Աստված առաջնորդի մեր ժողովրդի վերազարթոնքի ճանապարհները և անսասան պահի մեր Հայրենիքը՝ ազատ ու անկախ պետականությամբ: Թող Տերը խաղաղություն պարգևի համայն աշխարհին, և թող նոր՝ 2004 թվականը հաջողություններ բերի պետությունների ու ժողովուրդների համար, ընդհանուր կյանքին, երջանկություն ու բարիք՝ բոլոր մարդկանց:

Տարեմուտի այս գիշեր և գալիք նոր տարում, մեր կյանքի բոլոր օրերում բոլոր նվերներից ավելի հույս ու սեր պարգևենք միմյանց:

**Շնորհավոր 2004 նոր տարի**